

Հարց

Ավարտել եմ 2010-11 ուսումնական տարում, ցանկանում եմ ուսումնառել քարձրագույն ուսումնական հաստատությունում: Ո՞րտեղ պետք է հանձնեմ փաստաթղթերս:

Պատասխան

Նախկին ուսումնական տարիներին ավարտած շրջանավարտները միասնական, ավարտական քննություններին մասնակցելու համար հայտերը ներկայացնում են նախարարության կողմից որոշված դպրոցներ:

Կապանի տարածաշրջանը՝	Կապանի թիվ 9 ավագ դպրոց
Գորիսի տարածաշրջանը՝	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց
Սիսիանի տարածաշրջանը՝	Սիսիանի ավագ դպրոց
Մեղրու տարածաշրջանը՝	Մեղրու թիվ 1 միջն. դպրոց

Հարց

Ցանկանում եմ աշխատել որևէ դպրոցում իմ մասնագիտությամբ, ունեմ քարձրագույն մանկավարժական կրթություն: Ի՞նչ կարգով կարող եմ ընդունվել դպրոց աշխատանքի:

Պատասխան

Դպրոցում աշխատանքի ընդունելու մասին դիմումի կապակցությամբ հայտնվում է, որ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի, պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղը համալրվում է մրցութային հիմունքներով: Դուք կարող եք մասնակցել ուսուցչի թափուր տեղ ունեցող ցանկացած դպրոցի հայտարարած մրցութին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ ապրիլի 15-ի N-396-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի» պահանջներին համապատասխան: Մրցութների հայտարարություններին կարող եք հետևել ՀՀ ԿԳ նախարարության «Կրթություն» պարբերականում կամ «forum.armedu.am» կայքէջում: